



ՆՇՈՒՄՆԵՐ

2014թ. հունվարից մինչև 2015թ. դեկտեմբեր

4,324

խոցելի անձի և նորեկների (1,524 ընտանիք) տրամադրվել է հրատապ ֆինանսական աջակցություն/ առօրյա ծախսերի համար գումար, հագուստ, դպրոցական պարագաներ

607

անձ օգտվել է կենսաապահովման ծրագրերից (գործիքներ և միկրովարկավորում)

3,357

անձ (926 ընտանիք) օգտվել է բնակարանային վարձի մասնակի փոխհատուցման աջակցությունից

6,500

անձ ստացել է իրավական աջակցություն, ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն և խորհրդատվություն

1,004

անձ ստացել է հիգիենիկ պարագաներ

3,347

անձ (897 ընտանիք) ստացել է սննդի փաթեթներ և օգտվել է ինտեգրացիոն ճաշարանից


Մտահոգության առարկա հանդիսացող անձինք (ըստ 31-ը դեկտեմբերի 2015թ.)

Ընդհանուր **19,955** մտահոգության առարկա հանդիսացող անձ՝ փախստականներ, ապաստան հայցողներ, փախստականի իրավիճակում հայտնված անձինք ըստ երկրների և ապաստան հայցողներ

Երկիր	Ընդամենը
Սիրիա	17,000
Ադրբեջան	1,502
Իրաք	1,031
Ուկրաինա	111
Այլ	116
Ապարդաքացիներ	311
Ընդամենը	19,955

Ֆինանսավորում

պահանջված 6,4 մլն. ամերիկյան դոլարից՝



ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայությունը երկրում

Գրասենյակ - 1 գրասենյակ մայրաքաղաքում՝ Երևանում
Աշխատակազմ՝ 10 տեղացի աշխատակից, 2 միջազգային աշխատակից



Printing date: 12 Oct 2015 Sources: UNCS, UNHCR
The boundaries and names shown and the designations used on this map do not imply official endorsement or acceptance by the United Nations.

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ և ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ) իր ներկայացուցչությունը հաստատեց Հայաստանի Հանրապետությունում 1992 թ. դեկտեմբերին աջակցելու Ադրբեջանից մեծ հոսքերով գաղթած ավելի քան 360 հազար էթնիկ հայ փախստականների, ովքեր Հայաստան էին գաղթել Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով: Հայաստանն անդամակցել է 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային և վերջինիս 1967թ. արձանագրությանը, ինչպես նաև 1954թ. և 1961թ. Քաղաքացիություն չունեցող անձանց կոնվենցիային: 2015թ. -ից Հայաստանը համարվում է ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեի լիիրավ անդամ:

Ներկայումս գրասենյակի գործունեությունը մասնավորապես կենտրոնացված է Սիրիայից տեղահանված և Հայաստանում պաշտպանություն փնտրող մոտավորապես 17.000 անձանց մարդասիրական կարիքները բավարարելու և ինտեգրմանը նպաստելու վրա: Սիրիայից ժամանումները շարունակական բնույթ են կրում: Ավելի և Հայաստանը նաև հյուրընկալում է փախստականներ և ապաստան հայցողներ Իրաքից, Ուկրաինայից և Պարսկաստանից, ինչպես նաև քիչ թվով փախստականներ Աֆրիկյան պետություններից:

Հիմնվելով նախորդ տարիների ընթացքում օրենսդրական բարեփոխումների ոլորտում, ապաստանի ընթացակարգերի և մարդասիրական արձագանքի ցանցի ստեղծման ասպարեզներում գրանցված առաջընթացի վրա՝ 2015-2017թթ. ռազմավարական առաջնահերթությունները հետևյալն են՝

- շարունակել զարգացնել Հայաստանում ապաստանի համակարգը՝ որոշումների ընդունման որակը բարձրացնելու և կարողությունները առկա կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,
- մարդասիրական աջակցությունից աստիճանաբար անցում կատարել դեպի երկարատև լուծումներ, հիմնականում տեղական ինտեգրման միջոցով,
- ապաքաղաքացիության որոշման գործընթացների կիրառում, որին կհաջորդի համապատասխան օրենսդրության ընդունումը

ԱՇԽԱՏԵԼՈՎ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

ՄԱԿ ՓԳՀ-ի հիմնական պետական գործընկերներն են Միգրացիոն պետական ծառայությունը, Արտաքին գործերի և Միջուրի նախարարությունները: ՄԱԿ ՓԳՀ-ն իր հիմնական գործունեությունը Հայաստանում իրականացնում է գործընկերների հետ սերտ համագործակցությամբ: Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի ծրագրային գործընկերներն են Միգրացիոն պետական ծառայությունը, Առաքելություն Հայաստան բարեգործական ՀԿ-ն, Հայկական կարմիր խաչի ընկերությունը, ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, Սելվ դը Չիլդրեն միջազգային կազմակերպությունը և Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը: Բացի այդ, ՄԱԿ ՓԳՀ-ն սերտորեն համագործակցում է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Հայկական Կարիտսի, ՕՔՄՖԱՍ կազմակերպության, «Անի և Նարոդ հիշատակի» հիմնադրամի, Հալեպ, «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական կազմակերպության հետ: Նշված կազմակերպությունների մեծ մասը ՄԱԿ ՓԳՀ-ի օժանդակությամբ կազմել են ծրագրեր և իրականացրել են դրամահավաքներ: Գրասենյակը նաև ՄԱԿ-ի հայաստանյան թիմի ակտիվ անդամ է հանդիսանում, համագործակցում է Միգրացիայի միջազգային կազմակերպության, Յունիսեֆի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ: ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակը Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ հաջողությամբ նպաստել է միգրացիայի տեղահանման արդյունքները 2016-2020թթ. ՄԱԿ-ի Զարգացման աջակցության ծրագրի մեջ ներառելուն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանություն և ապաստանի կարողությունների զարգացում

- Հետագա օրենսդրական բարեփոխման գործընթացների խթանում, ներառյալ փախստականների և ապաստանի նոր օրենքի և ապաստանի դրույթի ներառումը Սահմանադրության մեջ:
- Միգրացիոն պետական ծառայության հետագա կարողությունների զարգացում դասընթացների և տեխնիկական աջակցության միջոցով
- Դատական ներգրավվածություն դատավորների և իրավաբանների համակարգված դասընթացների միջոցով, իրավաբանական խորհրդատվության տրամադրում, և ռազմավարական դատավարություն
- Մոցիալ-հոգեբանական աջակցություն, սեռական և գենդերային պատկանելիությամբ պայմանավորված բռնության կանխարգելում և արձագանք
- Տեղահանված անձանց կարգավիճակի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման միջոցառումներ ուղղված վերջիններիս ինտեգրման խթանմանը

Առաջնային կարիքներ և հիմնական ծառայություններ

- Համապարփակ մարդասիրական արձագանքի ցանցերի և ուղղորդման մեխանիզմների պահպանում և ընդլայնում
- Բնակարանների վարձի մասնակի փոխհատուցում, միանվագ դրամաշնորհներ, և այլ թիրախավորված աջակցություն խոցելի անձանց հատուկ կարիքները հոգալու համար

Երկարատև լուծումների խթանում ինտեգրման և ինքնաապահովման ամրապնդման միջոցով

- Լեզվի դասընթացների տրամադրում, միջոցառումներ ուղղված մշակութային և սոցիալական ադապտացմանը, «ինչպես գործարարությամբ զբաղվել Հայաստանում» խորագրով դասընթացներ, ինչպես նաև մասնագիտական դասընթացներ զուգորդված ուսուցողական ծրագրերի և աջակցություն կապված շուկա մուտք գործելու հետ
- Ինքնաբավությունը խթանող ծրագրեր փոքր դրամաշնորհների տրամադրման և միկրովարկավորման միջոցով
- «Ընտանիքի բարեկամ» ծրագիր, համայնքի մոբիլիզացիա և հատուկ երիտասարդների ինտեգրմանը նպաստող միջոցառումների ձեռնարկում

Ապաքաղաքացիության կանխարգելում և նվազեցում

- Քաղաքացիական օրենսդրության փոփոխությունների խթանում այն բերելով ապաքաղաքացիության որոշման գործընթացների կիրառման

ՄԱԿ ՓԳՀ-ն շնորհակալ է իր դոնորներին ՄԱԿ ՓԳՀ-ի գործունեությունը Հայաստանում աջակցելու նպատակով կատարված ներդրումների համար:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակ, ՀՀ, ք. Երևան, 0010, Պետրոս Ադամյան փող 14, Հեռ.՝ + 374 10 584 892, Ֆաքս՝ +374 10 567 817, էլ. Հասցե՝ armye@unhcr.org